

պատվանում, օրինակ՝ Զառանձնելիս (թարախաբուժ դժիգ), կանաչ շնմքար (իբր Քըհստոսի մոռ զիխաշորն էր վանքի հիմքի տակ թաղված), Բալաբյ բյամբեր (գմբեթը տարրեց գույնի քարերից էր կառուցված): Իսկ քրդերն ու թուրքերն այդ վանքն անվանում էին դերա բալաբյ:

Տիրամոր վանք ուխտ գնալու կանոնները  
նույն էին, ինչ ա. Գևորգինը: Սակայն այս վան-  
քըն ավելի հեռու էր և ոչ թե Վանի կողմն էր  
ընկնում, այլ Բերկրիի, ուստի խառակոնիսցիներն  
էին իրենց գյուղում ապասում արճակցիներին,  
ու ապա շարունակում ճանապարհու Եթե ս. Գե-  
վորգի առն ուրախ երգ ու պարերի, զանագան  
զվարճությունների ականատես լինելու բաղմամ-  
բոխ մի տոն էր Վանի նահանգի բոլոր բնակիչ-  
ների համար, ապա Տիրամոր ուխտագնացու-

թյունը աշխատանքից թեթևացած այս երկու  
գյուղերի ընակիների համար շրջագայության  
բնույթ էր կրում:

Նրանք գյուղից գուրս էին գալիս ուրբաթ  
օրվա կեսօրին, գիշերում էին գավառի վերջին  
գյուղում՝ Հաջիշատով ու շարաթ օրը մայրա-  
մուտին հասնում վանք. Կիրակի առավոտյան  
տեղում զնում էին մատաղացուները, եփում,  
պատարագ անել տալիս և մայրամուտին, գուրս  
գալով Տիրամեր կոչված գյուղից, ամրող հինգ  
օր, օրը մի գյուղ շրջում: Այցելում էին Թիմարի՝  
Գործոթ, էրերին, Կյունենց և Համկուբերդ հայ-  
կական գյուղերը, իրենց հետ բեղած ձավարն ու  
շոր փոխինգը գյուղացիների հետ փոխում ծիրանի  
շրով ու ընկույզով և յոթերորդ օրը կեսօրին տուն  
վերագառնում:

ફ ઉ વર ઉ ની ૮

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

**ՃԸԼԻ-ԵՐՎԻ:** (Փօքրահասակ մանուկների առաջին խաղերից): Մանուկները նսաած աեղբ մեկը մյուսի ձեռքերի երեսի մաշկից րոնում էին, և մի քանի մանկական ձեռքեր իրարից բռնած, բարձրանում-իշնում էին, ու երեխաները միաժամանակ երգում էին.

Ճըվի-ճըվի,  
Ակլա ճըվի,  
Աղեն կյնաց  
Երուսաղեմ,  
Պուրթ ի պիրե,  
Պամրակ չկպե,  
Շալ արաց,  
Շըլվար շարաց,  
Ուրն արաց,  
Լաճուն շարաց:  
Թհհւա, ճուճուդիկ...

Վերջին ճուճուղիկ (ճնճղուկ) կանչի հետ  
բոլորն էլ ձեռքերը բաց էին թողնում ու նայում  
վեր:

Դրբանիքնա: Մանուկները նստած ձեռքերը  
բռունցք արած, բութ մատր վերե ցցելով, մյուսի  
բռունցքի մեջ տեղադրելով, կաղմում էին իրար  
միացած բռունցքների շարք և բարձրացնելով ու  
իշեցնելով, երգում էին.

Օմ-փինա,  
Դրըոմփինա,

Ճողն իլե  
Օմփի բաշի,  
Պստիկն իլե  
Զլաշ գաշի,  
Աղեն կասի՝  
Վիրին քյաշիւ

Վեցշին խոսքի վրա վերեկի ձեռքը շղթայից  
անջապում էր, իսկ մնացածները շարունակում  
էին նույն երգը, նույն համաշափաթյամբ՝ վեր  
ու վար անելով ձեռքերը։ Աակայն այս անգամ  
ասվում էր՝ «Աղեն կասի արկին քյաշի» և  
ամենաներքեի ձեռքն էր պոկվում ընդհանուրից։  
Այսպիս, մինչև րոլոր ձեռքերն էլ տաղայի» հրա-  
մանով հեռացվում էին. ամենավերջին ձեռքը  
ստանում էր «Օմփի րաշի» պատիվը։

Կյըքի կրնկան պալպարեն: Երեխանեղից մեկն  
իր զույգ ձեռքերի շոած մատների ժայրերը միաց-  
նում էր իրար, ու ստացվում էր շորս բացվածք:

Մյուսը սկսում էր բաղարձի խմոր հուն-  
ցելու արարողությունը, ընդ որում, ծիծաղելի  
կերպով՝ մերթ քթից ծորացող ջուրը ենթագրյալ  
խմորի մեջ խառնելու շարժումներ, մերթ թեա-  
տրակի կամ զլիի մաղերի մեջ վաղվագող ոչինները  
բռնելու ու խմորի մեջ գցելու ձեեր անելով, վեր-  
ջապես ավարառում էր «խմոր հունցելը» և մոտե-  
նում նստածին ու «խմորը» ձեռքով նրա բաց  
մաաների (սկզբում ճկույթի) արանքը մտցնելով,  
հարցնում՝

— էսա զի՞ր թոներն իւ  
— Ռւս այսինչի, —պատասխանում էր խաղ-  
բնկերը:

— Մել կրակ կա՝ իմ պաղարձ թիսեմ:  
— Չկա, —պատասխանում էր «թոնրատերք»:

— Վո՞յ, ք....մեշ, —հայհոյում էր խմորա-  
տերք և ձեռքը մացնում միջամատի ու մատնե-  
մատի արտնքը:

— Էսա զի՞ր թոներն իւ  
— Թավոր ալսրնչք, —լինում էր պատասխանը:  
— Մեշ կրակ կա՝ իմ պաղարձ թիսեմ:

— Չէ, Էսա թոնրան մեշ կատուն ծյար ի  
խոնեն:

— Վո՞յ, խորտմ ըլնի բավոր այսինչի տան  
խաց, —հայհոյում էր խմորատերք և ձեռքը մրտ-  
ցրնամ միջամատի ու ցուցամատի արանքը.

— Էսա զի՞ր թոներն իւ  
— Տերտող, —լինում էր պատասխանը:  
— Մեշ կրակ կա՝, իմ պաղարձ թիսեմ:  
— Մեշ պծառ կեր, ժամփարն լկավ աարավ,  
— Վո՞յ, ժամփիրի խեր շուն տանի:

— Էսա ճոշ թոներն զի՞րն ի, —հարցնում էր  
խմորատերք, ձեռքը մացնելով թոնրատիրոց թթա-  
մատի ու ցուցամատի արտնքը:

— Մերն ի, —լինում էր պատասխանը:  
— Մեշ կրակ կա՝, իմ պաղարձ թիսեմ:  
— Հրին կրակ ի, —լինում էր պատրաստակամ  
պատասխանը:

«Շպի կինք հազար ու մի սիալ շարժում-  
ներսվ վերջին «թոնրան» մեջ թիսում էր իր բա-  
ղարձը, սթոնիրը ծածկում և սիմորի տաշար»  
տանում տիրոջը հանձնելու Մինչե նրա վերա-  
դարձը, թոնրատերք թոնրիդ հանում էր բաղարձ-  
ները, որն «ուտում» էր, որը «թարցնում» ու  
ձեռքերք իրարից անջատելավ՝ նստում:

— Դո՞ր են բատեկի թոնրներ, զո՞ր ի բատե-  
կի թոնրատեր, —յացակումած հարցնում էր  
«դորի կնիկը» զեսուղեն ման զալով, այնինչ  
թոնրատերք հանգիստ, նրա աշրի տոազ նստած,  
ուտում էր բաղարձները:

Խաղը սրանով էլ վերջանում էր:

Պատպիկ-պատպիկ (Խմբախաղ): Մի բանիսով  
մեկի աշրք կապում էին, ձեռնափայտը ձեռքը  
տալիս վերջինս կորացած մեջքով, փայտը թրփ-

թփացնելով. ուղկորվում էր: Երեխաներն ըս-  
կրում էին եսեից վագել:

— Իապիկ, պապիկ, զո՞ր կէրթաս, —հարց-  
նում էր նրանցից մեկը:

— Կէրթամ ժամ. — տիրածայն պատասխա-  
նում էր պապիկը:

— Չիկ էլ տանե՞ս:

— Ախրը վախենամ նամրիսն աըտ...

— Զէ, պապիկ, չեմ տ...րըթու տան խաց խա-  
րամ բինի. թե որ ես տ..., —ե բողորն էլ կուզիկ  
ձեանալով, շարվում էին պապիկի ետեից:

Պապիկը շարունակում էր իր երթու Հետեղող  
երեխաները սկսում էին շրթունքներով պրո-պըռ  
ձայներ արձակել: Պապիկը վրդովված կանդ էր  
առնուու, ձեռնափայտը պատեցնում ազ ու ձոին  
ու լացակումած կանչուու:

— Էտա ո՞ր շան թուլեն էր աղոթքս խարամեց,  
Խազրնկերները լությամբ փախչում էին  
աարբեր կողմերս իսկ ոպապիկը ձեռնափայտը  
պտաւեցնելով, որոնում էր ոշան թուլաներին: Եթե  
հաջողվում էր ձեռնափայտը որեւ մեկին  
կողցնել, ապա ավյալ երեխան փոխարինում էր  
պապիկին, եթե ոչ պապիկը մնում էր իր ղերում,  
և խաղը կրկնվում էր:

Քյարալիսպիկ: (Առավելապես աղջիկ երեխա-  
ների սիրված խմբախաղերից): Հավաքում էին  
հին, քայլքայլող պատերի ներքեր թափված  
փոշիացած հողը, կիտում րրղաձկ, րրղի զաղա-  
թից խիսա զղուշոթյամբ զոր էին լցնում, որ  
հողակույար մինչե ներք թրջքեր, սակայն ար-  
տարին տեսքը լիսաթարքեր Շուրջանակի շարվում  
էին և նույն փոշիացած հողով, խիսա զղուշու-  
թյամբ, զաղաթից մինչե ստորսան իրենց ափե-  
րով արորելով հողակույար, կրկնում էին՝

— Քյարափոսիկ, մազ տուր:

Երբեմն-երբեմն դադարեցնում էին աշխա-  
տանք և «քյարափոսիկի» վրա ցանկած փոշե-  
հազը ևս տանելով, ուշաղիր նայում, թե բարա-  
փոսիկի վրա մազ երեսում է, թե ոչ:

Հենց սր մազ նկատեին, բարափոսիկը մաք-  
րում էին վրան լցված հողից: Այդ զկուլ շ  
շրնդհաավող շիումից հողակույար արտաքին  
կեղեն արդեն ամրացած էր լինում: Հետո ստաց-  
ված բուրդի շուրջը նստած խաղացողներից յուրա-  
քանչյուրը, իր բաժին ահողամասին առաջ չսրած,  
իր բարափոսիկի ներքեի մասում տան համար

մի դոնակ էր բացում։ Մի «դուռ» էլ բացում էին Քարափոսիկ «գուղի» գաղաթին, ապա դուռը թիւամբ, մասի ծայրով ամեն մեկն իր «աւան» ներսը եղած հողը դուրս էր քաշուն։ Մինչե մնում էր մի երդիկով ու մի քանի դոնակով, որոշակի, ամուր, միակառը մի կառույց, որի «երդիկից» ընկած լույսից կարելի էր նշմարել քարափոսիկի ներքին դասարկությունը։

Խաղացող յուրաքանչյուր երեխա իր դուան առջեր դուրս բրելած հողափոշուց իր «աւան» առաջ պատ էր քաշում, ներսում զանազան չոփեր անկելով, իր համար «րազմա» էր ստեղծում և հետո, հերթականորեն, քարափոսիկի «երդիկից» ջուր չին լցնում ներս։

Երդիկից լցված ջուրը դասարկ քարափոսիկի միջով հոսելով, դուրս էր դալիս աղմկող «աւանաերերի գոներից» ու լցվում նրանց ծառասաաններն ու բախչաները։

Խաղից հոդանձ, միահամուռ ջանասիրությամբ երեխաները ավերում էին իրենց «դյուդն» և ցրվում։

### ՀՈԴԱՆՁ

Ինչպես ամենուրեք, Արծակում ևս հնամենի սովորությ էր ձմոան երեկոներին տղամարդկանց հավաքվելը մի քանի հոդայում և ասուլիսով երկար դիշերները կարճելու։ Հոդաները, որ «Դիվանխանա» ընդհանուր անուն էին ստացել, ախոռի առաջին բաժանմունքի մի մասն էին կաղմում, որի վերեի ճակաաին կար մի լայն բուխարի, իսկ հատակին փոված էր լինում կտավափափ լոր ցողուն (բալմ) կամ չոր խոս, որն ամեն շարաթ փոխում էին ու նորը փոռում։ Թե՛ բուխարու վառ պահելը, և թե հասակին փոված չոր խոտը միշա նորոգելը աանտիրոջ պարագն էր։

Միջտ ավելի բաղմամարդ էին լինում Փյուղարի թաղի Մոլոյի դիվանը, Փոս թաղի Կամրոյի ու Աիանսու դիվանները։ Եթե մեկի աանը հյուր էր լինում, ընթրիթից հետո աանաերն իր հյուրին

և աանում էր իր հաճախած դիվանխանան։ Հաճախ այդ հյուրերի մեջ լինում էին ժողովրդական ավանդավեպերի, Հրաշապաաում հեքիաթների և այլ պատումների գիտակ մարդիկ, որոնք հոժարությամբ դիվանխանայում պաամում էին։

Իգական սերո, որքան էլ տարիքով, դիվանխանա մուաք լուներ։ Հիշված երեք դիվանխանաների սիրված հյուրն էր Արծակում երեսուն տարուց ավելի ապրած, բայց միշա նորեկ կոշվող ու միաժամանակ «կոռնկ» մականվամբ մկրաված «Թաղահայերաց Մարահրոսո»։

Մարահրոսը կոռնկ մականունն էր սաացել իր շափաղանց երկար ու նիհար սրունքների համար։ Մոտ աասը աարի տեխնիկական աշխատանք կաաարելով Վիեննայի Մուրաա-Ռաֆայելյան դպրոցում, շնորհիվ իր սուր մաքի, արաակարդ հիշողության և լսածը յուրովի պաամելու գերաղանց ունակության, Թաղահայերաց Կոռնկը րոլորի համար էլ պաամելու նոր ու հեաաքրփիր նյութ էր ունենում։ Նրա պատությունները օրեր էին տեսում։ Պաամածները լինում էին թե՛ ասավածաշնչային, թե՛ պարսկական ու Հունական դիցարանությունից վեցքած։

Կոռնկ Մարտիրոսն ուներ ճոխ լեզու և յուրաքանչյուր պաաում ձեակերպում էր յուրովի, օրինակ՝ ասավածաշնչային րոլոր պաամությունները անվանվում էին կամ «Տավիթ մարկարեն էնան ուր գուշմըններ», կամ՝ «Կյապրել խրիշտակ էնան սաաանեք»։ Պարսկական ամրող «Տահնամեն» անդիր պաամում էր, սակայն րոլոր հերոսներն ու փակեանները դառնում էին «Ռուսաամ էնան Սոհար»։ Ավելի աեղյակ էր հունական առասպեկներին, որոնց կիսաասվածները րոլորն էլ «Ճոշ-ճոշ դեեր» էին, օրինակ՝ «Զիդի-պող դե» (Սիդիփոս), «Դանդալոշ դե» (Ճանալոս), «Կրակակող դե» (Պրոմեթես), «Հոռոա դեվամեր» (Հերա) և այլն, Կոռնկ Մարտիրոս հեքիաթասեր դյուլացոց անփոխարինելի ասմունքողն էր։ (Նա և իր պաավ կինն իրենց փոքրիկ խրճիթում սրախողող արվեցին 1915-ի եղեռնի հենց առաջին օրը)։